

ՌՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ Տ. ՕԼԳԵՆԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ա. Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

XX դարի 10-ական թթ. սկզբին Հայկական հարցը մտավ իր նոր շրջափուլը: Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունը կրկին հույսեր ներշնչեց հայ քաղաքական շրջաններին՝ այդ հարցի շուտափուլ լուծման համար: Հայկական հարցը դարձավ դիվանագիտական հարաբերությունների առարկա: Մեծ տերությունների դեկլարներն այլևս առիթներով սկսեցին հաճախակի հիշատակել Հայաստանի անունը: Նվրոպական և մասնավորապես ռուսական մամուլը տպագրում էր արևմտահայերի ծանր ու ողբերգական կացությունը ներկայացնող հոդվածներ, որոնցում կոչ էր արվում փրկել կործանման եզրին գտնվող ժողովրդին: Հայ հասարակական-քաղաքական կուսակցություններն ու զանազան մարմիններ և միություններ խնդրագրեր, դիմումներ էին հղում մեծ պետություններին՝ կարգավորելու Արևմտյան Հայաստանի վիճակը: Սակայն իրական այն ուժը, որ կարող էր որոշակի դրական դեր խաղալ Հայաստանի ճակատագրում, դարձյալ մնում էր Ռուսաստանում: Ահա այս պայմաններում է, որ Հովհ. Թումանյանը 1913 թ. հունվարին գրում է իր հայտնի «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածը: Հետագայում հայացք գցելով Հայկական հարցի առաջացման ու զարգացման քառուղիների վրա, մեծ բանաստեղծը հանգում է այն եզրակացության, որ «Դարձյալ Հայկական հարցը Ռուսաստանի պաշտպանությանն [է] ապավինած և Ռուսաստանի հետ:

Դարձյալ ռուսական մամուլն է արծարծում Հայկական հարցը, և դարձյալ ռուսական զորքն է կանգնած էն դժոխք երկրի սահմանի վրա, ուր դարձյալ կոտորածի սարսափի տակ ալեկոծվում է հայ ժողովուրդը»¹:

Հայկական հարցի շուրջ առաջացած այս մթնոլորտում էլ (1912 թ. վերջ—1913 թ. սկիզբ) Թիֆլիս է ժամանում Պետերբուրգի «Биржевые ведомости» թերթի թղթակից, հայտնի հրապարակախոս Անտուան Բերեզովսկի-Օլգինսկին (կեղծանունը՝ Տ. Օլգենին): Մինչ այդ նա ութ ամիս Բալկանյան թերակղզում էր՝ Ալբանիայում, Սերբիայում, Բուլղարիայում և ականատես էր եղել պատերազմական գործողությունների ընթացքին: Ինչպես հաղորդում է «Մշակը», «այժմ նա (Օլգենին—Ա. Հ.) եկել է մեր երկիրը՝ Հայկական հարցի ուսումնասիրության համար: Նա... Թիֆլիսից կուղևորվի Էջմիածին, որտեղ... կծանոթանա լուսավորչական հայերի կենտրոնական տաճարի և նրան կից հիմնարկությունների հետ... ապա կուղևորվի Վան և Թուրքահայաստանի ուրիշ վայրերը»²:

Հունվարի 3-ին Տ. Օլգենինը Թիֆլիսի «Գրական-գեղարվեստական սալոնում» հանդես է գալիս բալկանյան պատերազմի մասին դասախոսությամբ, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ունկնդիրների շրջանում: Ռուս լրագրողը ներկայացնում է բալկանյան պատերազմի պատճառները (տնտեսական, քաղաքական, սոցիալական), կանգ է առնում դաշնակից պետությունների գաղտնի դաշնագրերի վրա, մանրամասն թվում վերջիններիս հաղթության պատճառները, տալիս է կոպիտ կողմերի զորքերի նկարագրերը, պատմում նահանջող թուրքական զորքի վայրագությունները քրիստոնյաների նկատմամբ: Օլգենինը խոսում է նաև զինադադարի ու հաշտության մասին, ներկայացնում

¹ Հոդվ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1951, էջ 235:

² «Մշակ», 6 հունվարի 1913:

դաշնակիցների փոխհարաբերությունները և Ռուսաստանի վերաբերմունքը դեպի Բուլղարիան, միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ հաղորդում Ալբանիայի և նրա ազգաբնակչության մասին: Դասախոսությանը, որ տևում է մեկուկես ժամ, հաջորդել է ռուս հրապարակախոսի և ունկնդիրների նույնքան ժամ տևող հարցազրույցը: Այդ ընթացքում նա անդրադառնում է նաև Հայկական հարցին, նշում, որ այն «դառնում է հերթական քաղաքական մի խնդիր, որը բալկանյան լուծված հարցերից հետո պետք է պահանջի իր լուծումը»³: Ս. Օլգինինը միաժամանակ նշում է, որ հայերն իրենց երկրի ու պահանջների մասին «քիչ նյութ են» մատակարարում ռուսական և եվրոպական մամուլին ու հասարակայնությանը, որի հետևանքով էլ համաշխարհային լայն հասարակայնությունը անտեղյակ է հայերի կացությանը:

Թիֆլիսում գտնվելու օրերին Ս. Օլգինինը շրջում է քաղաքում, լինում նրա տեսարժան վայրերում, հանդիպումներ, զրույցներ ունենում հասարակայնության լայն խավերի հետ, լսում նրանց կարծիքը արևմտահայերի կյանքի ու կացության մասին: Եվ հենց Թիֆլիսից էլ «Виржевые ведомости»-ին է ուղարկում չորս հոդված իր տպավորությունների մասին⁴:

Հունվարի 15-ին Օլգինինը Թիֆլիսից մեկնում է Երևանի նահանգ⁵, այցելում Երևան, էջմիածին: Հունվարի 23-ին էջմիածնի ճամարանի թատերասրահում, Բագրատ վարդապետի խնդրանքով, նա կրկնում է իր դասախոսությունը բալկանյան պատերազմի մասին⁶:

Այնուհետև ռուս հրապարակախոսը մեկնում է Արևմտյան Հայաստան՝ հայաբնակ այն վեց նահանգները (Էրզրում, Վան, Բիթլիս, Տիգրանակերտ, Սեբաստիա և հարբերդ), որոնք ենթակա էին եվրոպական հսկողության՝ համաձայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի: Այստեղ նա մնում է չորս ամիս, շրջագայում հայաշատ ու հայաթափ վայրերում, հանգամանորեն ուսումնասիրում արևմտահայության սոցիալական, տնտեսական ու քաղաքական գոյավիճակը: Իր անցած ուղու, այցելած վայրերի, ստացած բազմազան և հուզիչ տպավորությունների մասին Օլգինինը սպառնչ տեղեկություններ է հաղորդում իր թերթին ուղարկած թղթակցություններում: Գրված լինելով տեսածի ու ապրածի անմիջական տպավորության տակ, դրանք ունեն պատմական վավերագրի արժեք: Հարկ է նկատել, որ այդ հոդվածներն ու թղթակցություններն արագորեն թարգմանվել են հայերեն կամ էլ դրանց մասին ժամանակի անդրկովկասյան մամուլում տպագրվել են ծավալուն հաղորդումներ:

Ս. Օլգինինի առաջին թղթակցությունը կրում է «Քուրդերի մեջ» վերնագիրը, որ նա ուղարկել է Դիադինից⁷: Այս առաջին խակ հոդվածից պարզ երևում է, թե արևմտահայությունն ինչ ծանր ու սոսկալի ողբերգություն է ապրել ու ապրում, և թե ինչպիսի ահավոր վիճակում է նա գտնվում՝ շրջապատված ալլակրոն ու մոլեռանդ բազմամբոխով:

Օլգինինը Բայազետից Դիադին է հասել հինգ օրում: Առաջին օրը գիշերել է քրդաբնակ Գզը-Դիզէ անունով մի փոքրիկ գյուղում, որի հայոց մի հին գերեզմանատուն վկայում է, թե այդ գյուղը ժամանակին եղել է հայկական: Միակ հայը տեղական մաքսային ուղեկալի պաշտոնյան էր, որը գիշերը վախվորած ու անհամարձակ այցելում է թղթակցին, ներողություն խնդրում, որ իր տուն չի հրավիրել նրան: «Ըթե ես ձեզ հրավիրեի, հավատացե՞ք... ինձ կպանեին»⁸,—ասում է նա: Ապա պատմում է հետևյալը. «Քուրդերի մեջ սաստիկ գրգռում է թագավորում. նրանք բոլորովին բաց ասում են քրիստոնյաներին, թե սպասում են մի ամենափոքր նշանի, որպեսզի վերջացնեն քրիստոնյաներին: Թող հետո գան այստեղ կոզակներ. նրանք այդտեղ կգտնեն մեալն

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, 27 հունվարի 1913:

⁵ Նույն տեղում, 15 հունվարի 1913:

⁶ Նույն տեղում, 30 հունվարի 1913:

⁷ Նույն տեղում, 9 մարտի 1913:

⁸ Նույն տեղում:

մուսուլմաններ»։ Հայ պաշտոնյան հաղորդում է, որ Բայազետի շրջանում հա-
լետե թիվը 20—25000 է, որոնք ցիրուցան սփռված են 125000-անոց քրդական
ծոմի մեջ։ Այսպիսի պայմաններում դիմադրության մասին մտածելն անհնար
է։ Անիմաստ է անգամ գանգատվել թուրքական կառավարությանը, քանի որ
վերջինս ամեն միջոց ձեռք է առնում քրդերի մոլեռանդությունը գրգռելու հա-
մար։ Հայ պաշտոնյայի պատմածներից հայտնի է դառնում նաև, որ կառա-
վարության կարգադրությամբ բացված մեդրեսներում ազատորեն քարոզվում
է «հակաքրիստոնեական» կամ «հակահայկական» պրոպագանդա։ Նրա խոր-
հրդով Օլգենինը հանդիպում է քուրդ աշիրեթի շեյխ Ալի-բեկին, որը Հյուսի-
սային Քուրդստանում ամենահզորն էր։ Ահա թե ինչպես է հրապարակախոսը
նկարագրում այդ հզոր քուրդ շեյխին։ Շեյխը հագնված է կեղտոտ, նրա ամ-
բողջը շրջապատված է աղբով։ Զրույցի պահին շեյխը ասում է հետևյալը.
«Մեր ամբողջ գլուխը, մեր սիրտը և մեր էությունը լցված է շարիաթով։ Ուրիշ
օրերնք մենք չենք ճանաչում և մեր կյանքի բոլոր դեպքերում մենք խստորեն
դեկավարվում ենք նրա պատվիրաններով։ Իսկ շարիաթը պահանջում է, որ
մենք ոչ մի հանգամանքում չհամարձակվենք շփումն ունենալ քրիստոնյաների
հետ։ Շատ կարելի է, որ Ստամբուլում որևէ միևնույն ձեռք ասել է (ոչ անկեղծորեն),
թե շարիաթը պետք է հասկանալ «նոր ձևով», թե նա իբր պատվիրում է վերա-
բերվել բոլոր կրոններին հավասարապես, բայց մենք Քուրդստանում հարա-
զատ հավատացյալներ ենք և մենք չգիտենք որևէ «հին» կամ «նոր» շարիաթ։
...Ահա ինչու մենք իրավունք չունենք վերաբերվել քրիստոնյաներին ալլա-
պես, քան թշնամաբար և ատելությամբ։ Եվ եթե մենք թույլ ենք տալիս նրանց
անպատիժ կերպով այցելել մեր երկիրը, այդ միայն նրա համար, որ մենք մեր
մեծ փառիշահի հավատարիմ ծառաներն ենք և պատրաստ ենք հետևել բոլոր
նրա հրամաններին և ցանկություններին, թեև դրանք մեր սրտով չլինեն։ Ինչ
վերաբերում է մեր վերաբերմունքին առ մեր քրիստոնյա հայրենակիցները,
որոնք հավատացյալներ ենք և մեջ, կամա-ակամա մենք պետք է պահպանենք նրանց
հետ հարաբերություններ, թեև նրանք մեզ օտար են և մենք նրանց ատում
ենք։ Մենք ապրում ենք Քուրդստանում, մենք քուրդեր ենք, ուստի և ոչ մի
ճանապարհ, հեռագիր, ժանդարմ և ուրիշ եվրոպական նորություններ չենք
ուզում և մեզ պետք չեն։ Ինչ որ մեզ պետք է, մենք ձեռք կբերենք մեր սե-
փական հրացաններով...»⁹։

Տ. Օլգենինը իր թղթակցություններում նկարագրում է նաև Ալաշկերտ գա-
վառի հայ բնակչության տնտեսական և իրավական անտանելի ծանր դրություն-
ներ։ «Առանց հուլիսի և արշալույսի» վերնագրով հղվածում¹⁰ թվագրված փե-
տրովարի 9, Ալաշկերտ, նա մասնավորապես ներկայացնում է Զիլքանդ դյու-
զը, ուր ստիպված է եղել անբարենպաստ եղանակի պատճառով մնալ երկու
օր։ Ռուս հրապարակախոսը նկարագրում է գյուղի գետնափոր նկուղները,
դրանց բնակիչներին։ Վերջիններս խոսում են ուռեերեն, քանի որ գյուղում
կա մի 10 ընտանիք, որոնք Ռուսաստանում ապրել են 12—15 տարի։ «Ես չեմ
կարող հաղորդել մեր գրույցը իր ամբողջ պարզությամբ ու անկապ միամտու-
թյամբ, որը վրաս սարսափելի ծանր ու տխուր տպավորություն թողեց,—
գրում է Տ. Օլգենինը։— Դրանք մի շարք կցկտուր բացականչություններ էին,
խորը հառաչանքներ, դառն ու տխուր գանգատներ, խառնուրդ անիմաստ,
զուտ մանկական հույսերի... Այն բոլորի մեջ, ինչ որ ասում էին նրանք,
նկատվում էին անխոսության խուլ վհատությունը, անխոսափելի կորստյան
գիտակցությունը, և—կրկնում եմ—նրանց պատմածները սարսուռ էին ազ-
դում. և ես ամաչում էի, և ցավ էր պատճառում ինձ՝ եվրոպացուս, ինտելի-
դենտ մարդուս, խոստովանել իմ... անզորությունը՝ օգնելու նրանց իրենց
կորստյան անդունդի ծայրին»¹⁰։ Գյուղացիները հաղորդում են, որ թեպետ
երկու տարի է, ինչ զինված ավազակություններ ալլա չեն լինում, սակայն
կողովապետ են ավելի սարսափելի ձևով. դա «աշարն» է, որ կառավարու-

⁹ Նույն տեղում։

¹⁰ Նույն տեղում, 20 մարտի 1913։

թյունը վերցնում է դրամով: Երիտթուրքերի այս քաղաքականությունը, ինչպես հայտնի է, նպատակ էր հետապնդում տնտեսապես սնանկացնել արևմտահայությունը: Չվճարելու դեպքում կառավարությունը վաճառում էր հարկատուի կայքը, և արևմտահայությունը ստիպված բռնում էր գաղթի ճանապարհ, որը, ի դեպ, ահռելի չափերի էր հասնում: Հայ գյուղացիները թողնում-հեռանում էին իրենց բնօրրանից՝ մեկը Ռուսաստան, մյուսը՝ Ամերիկա: «Ու նորից եմ ես կրկնում. ես երկար չեմ մոռանա այն օրերը, որ ես անցկացրի Չիքանո գյուղի գետնափոր-նկուղում: Չեմ մոռանա՝ նաև այն մոմենտը, որ Ձեզ Պետերբուրգում կթվա և՛ սենտիմենտալ, և՛ ծիծաղելի, բայց որը այստեղ ինձ՝ ոչ այնքան կրոնասեր մի մարդու վրա ցնցող տպավորություն թողեց, երբ, հրաժեշտ տալով ինձ, զառամյալ ծերունի քահանան դիմեց գյուղացիներին. «Եղբայրներ, աղոթե՛ք, որպեսզի Ռուսաստանը մեզ չմոռանա»: Եվ ամբողջ բազմությունը ծունկ չոքելով՝ հառաչանքներով ու հավատով կրկնեց բարձրաձայն նրա վշտահար խոսքերը...»¹¹:

Փետրվարի 10-ին Պատնոցից գրած «Անհույս և անլույս» ենթախորագրով հոդվածում¹² Օլգենինը, նկարագրելով իր անցած ճանապարհը, նշում է, որ Բայազետից դուրս գալուց 10 օր հետո ձյուն-ձմեռով հասել է Քիլիշ-Գեդյուկի բարձրությունը, որտեղից իջել է Եփրատի արևելյան ճյուղի՝ Արածանի գետի հովիտը: «Երբեմն այս տեղը Հայաստանի կենտրոնավայրն էր. այժմ դանդաղորեն, բայց անընդհատ անհետացող Հայաստանն է: Բազմաթիվ ծաղկյալ հայ գյուղերից այժմ մնացել են միայն գերեզմաններ, մյուսներում՝ հայերը մի քանի տասնյակ տներով քարշ են տալիս իրանց ողորմելի ու կիսաջաղց գոյությունը»¹³: Օլգենինը նկարագրում է Քյոշկե գյուղը, նշում, որ անգլիացի նշանավոր ճանապարհորդ Լինչը 1894 թ. այստեղ հաշվել է 80 տուն, այժմ մնացել է ընդամենը 20-ը: Հրապարակախոսը արձանագրում է, որ քրդերը օր ու արև չեն տալիս հայերին, խլել են նրանց հողերի 2/3-ը և պահում են վախի մեջ: Թուրքական կառավարությունը բանակ է զորակոչում միայն հայերին, քրդերն ազատված են դրանից:

Թե Քյոշկեում և թե Տուտախ վարչական կենտրոնում Օլգենինը բազմիցս առիթ է ունեցել լսելու, որ քրդերի մեջ աճում է «խուլ հուզմունքը», որ կազմակերպված և պատրաստվող ջարդերի մասին լուրերը տարածվել են այստեղ ևս: Այս իրողության մասին Օլգենինին պատմել է Ռուսաստանից գաղթած մահմեդականների շրջանում շատ ազդեցիկ մի մարդ՝ Կարամանլը-բեկը, որը քրդերից կազմված համիդիե գնդի հրամանատարն էր: Նա չէր թաքցնում իր կարծիքը այն երկրի մասին, ուր գաղթել և բնակվում են իր ցեղակիցները: «Ժողովուրդը մեռնում է զանազան հիվանդություններից, Տուտախի կայմակամության մեջ գտնվող 62 գյուղեր չունեն մի հատիկ բժիշկ, ոչ մի հիվանդանոց, դպրոցների փոխարեն կիսավեր շենքեր կան նրանց համար, ճանապարհների հաղորդակցություն՝ բնավին, անաչառություն և արդարություն՝ նույնպես,—ասել է նա:—Հասարակ, աղքատ ժողովուրդը, քրդերն ու մուհաջիրները (Ռուսաստանից եկած մահմեդականներ), նույնպես տառապում են հարևան քրդերի անպատիժ կամայականություններից, թալաններից ու բռնություններից, ինչպես և հայերը»: Նա էլ է այն կարծիքը հայտնում, որ միայն ռուսների միջամտության երկյուղն է զսպում քրդերին, այլապես նրանք վաղուց բնաջնջած կլինեին հայ բնակչության այդ խղճուկ մնացորդները: Իր այցելած բոլոր վայրերում այս խոստովանությունը Օլգենինը լսել է նաև այլ քրդերից, որոնք խորապես համոզված էին, թե մոտ ապագայում այդ ողջ երկիրը անցնելու է Ռուսաստանի հովանու տակ: Այս պատկերացման մեջ, գրում է Օլգենինը, մեղավոր են երիտասարդ թուրքերը, որոնք, կանխամտածված նման լուր տարածելով, ցանկանում են արգարացնել համիդիե գնդերի նոր զորակոչը, դրանով իսկ շիկացնելով մթնոլորտը: Ռուս-թուրքական սահմանի ողջ եր-

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում, 23 մարտի 1913:

13 Նույն տեղում:

կարողությամբ, ինչպես և էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգների գավառներում թուրքերը եռանդով կազմակերպում են համիդիե զնդեր, որոնք ոչ միայն նոր ձևի համազգեստ են կրում, այլև զինվում են նորագույն զենքերով: Հայերը, ըստ Օլգենիի, հակված են կարծելու, որ համիդիե զորակոչի պատճառը Ռուսաստանի սարսափը չէ, այլ այն, որպեսզի «մի անգամ ընդմիջտ վերջ տան Հայկական հարցին»: Ռուս հրապարակախոսը նշում է, որ թուրքական կառավարության ձեռք առած միջոցներին հայերի տված այս բացատրությունը թվում է անհավանական, բայց, մյուս կողմից, այն յուրաքանչյուր օրը, որ «ես ապրում եմ «անհետացող Հայաստանում» համոզում է ինձ, որ Ռուսաստանի կամ որևէ մեկի միջամտությունը—բայց անհապաղ, վճռական, իրական ուժով ամրապնդված միջամտությունը—անհրաժեշտ է: Այն յուրաքանչյուր վերստ տարածությունը, որ ես անցնում եմ առաջ այս դժբախտ երկրում, ամեն մի նոր գյուղ, ամեն մի նոր հանդիպումն համոզում են ինձ, ստիպում են ինձ բարձրաձայն դիմել ամբողջ քաղաքակիրթ հասարակությանը: Պարոններ, հասկացե՛ք, վերջապես, որ այդ ժողովուրդը գտնվում է աղետի նախօրյակում»:

Տ. Օլգենիին փետրվարի 16-ին ժամանում է Վան¹⁴: Քաղաքում հրատարակվող «Վան-Տոսպ» շաբաթաթերթը տպագրում է հարցազրույց նրա հետ: Թղթակցի այն հարցին, թե ի՞նչ նպատակով եք եկել Հայաստան, ռուս հրապարակախոսը պատասխանում է. «Հայաստանի և հայերու դիրքն ու վիճակը տեղվայն վրա ուսումնասիրելու համար»¹⁵, իսկ այն հարցին, թե ի՞նչ կարևորություն կարող է ունենալ այդ ուսումնասիրությունը հայերի համար, նա պատասխանում է. «Ինչպես միշտ, նույնպես և այժմ ռուս կառավարությունը մեծապես շահագրգռված է Հայաստանով, նա հոն շահեր ալ ունի, այնպես որ հայեր կրնան հույս դնել յուր բարյացակամության վրա: Իմ ուսումնասիրություններս Ռուսիո մեջ պիտի պատրաստեն նպաստավոր հանրային կարծիք մը հայերու համար»: Հարցազրույցից պարզվում է, որ Օլգենիին շատ լավ գիտե «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Փալանթարին, շրջագայել է Բայազետում, Ալաշկերտում, Արճեշում և Կովկասում գտնվելու օրից իր թերթին ուղարկել է 22 հոդված և որ մտադիր է 15 օր մնալ Վանում, ապա մեկնել Բիթլիս, Մուշ, Սղերդ, Տիգրանակերտ ու հարևանները:

Վանում Օլգենիին շփվել է հայ հասարակայնության զանազան շրջանների հետ, տեղեկություններ հավաքել արևմտահայերի կյանքի ու կենցաղի, հողալի հարցի, հարստահարությունների և այլ հարցերի մասին, մասնակցել է իր պատվին կազմակերպված ճաշկերույթներին: Վանում ևս նա այն կարծիքն է հայտնում, որ Ռուսաստանի ժողովուրդն անծանոթ է Հայկական հարցին, նրանց ցավերին և մինչև իսկ գոյությունը, ուստի այդ պատճառով էլ նույնիսկ հասարակական կարծիք չի կարող լինել ի նպաստ Հայկական հարցի: «Զեր կովկասահայ եղբայրները...—ասում է նա,—հոգ չեն տարել Ռուսաստանի մայրաքաղաքներից կամ գլխավոր քաղաքներից մեկում ունենալ մի օրգան, որ ռուս ժողովրդին ծանոթացներ հայ ժողովուրդը և նրա հարցն ու հասարակական հոսանք առաջ բերեր ի նպաստ Հայկական հարցին»¹⁶:

Մեկ այլ թղթակցության մեջ Օլգենիին հաղորդում է իր խոսակցությունը դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների հետ¹⁷, Այս հոդվածից մենք գիտակցաբար ծավալում մեջբերումներ կանենք, քանի որ այստեղ հանգամանորեն ներկայացվում է դաշնակցական ղեկավարների տեսակետը արևմտահայերի և Հայկական հարցի մասին, նրանց վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: «Ամենից առաջ,—ասել են նրանք,—մեր կուսակցությունը բուն կերպով բողոքում է այն բանի դեմ, որ իբր մենք մեր դրոշակի վրա գրել ենք «Հեռու Ռուսաստանից» նշանաբանը: Դա շարամիտ զրպարտություն է, որ

¹⁴ «Վան-Տոսպ», 1913, № 5, էջ 56—57.

¹⁵ Նույն տեղում, էջ 52—53.

¹⁶ «Մշակ», 13 մարտի 1913.

¹⁷ «Հորիզոն», 17 մարտի 1913: «Մշակ», 13 մարտի 1913.

տարածում էին մեր հակառակորդները: Նրանց ցուցմունքը ինչ որ ռեզոլյուցիաների մասին, կայացած 1907 թ., նույնպես միտումնավոր ստույգ չէ: Այդպիսի ռեզոլյուցիաներ կուսակցության ո՛չ հիշյալ, ո՛չ ուրիշ համագումարների չեն արել: Բայց մենք չենք ծածկում, որ այդ ժամանակները (1905—1907 թթ.) դաշնակցականները, ինչպես և շատ ռուս առաջավոր մարդիկ, գրավված ընդհանուր դեմոկրատական շարժումով, երազում էին հնարավորության մասին՝ ստեղծելու կյանքի այնպիսի պետական կազմ, որ ապահովեր ինքնուրույնության համար: Ապակենտրոնացման գաղափարով մեր այդպես համակվելուն մենք հայերս մեղավոր ենք, ինչպես և մի քանի ռուսական կուսակցություններ, բայց այդտեղից մինչև «քաղաքական սեպարատիզմ»՝ մեզ համար հազիվ անցնելի տարածություն է: Վրա հասավ 1908 թ. և ռուսականին փոխարինեց թուրքական գարունը:

Հնարավոր է, որ հայ ժողովրդի մի մասը, տեսնելով Ռուսաստանի մեջ իրանց գաղափարական և ժողովրդական ձգտումների տխուր տապալումը, շատ կուրորեն, շատ աղմկորեն հավատաց երիտթուրքերի խոստումներին. այնքան շատ մենք ցանկանում էինք հավատալ նրանց: Ահա թե ինչու այդ հեռավոր օրերում թյուրքաց հայերի մի քանի ներկայացուցիչների խոսքի և ճառերի մեջ հնչվում էր այնքան դանդաղություն, վերավորանք և գրգռում, բայց ոչ շարակամություն... Թյուրքական հավասարության և եղբայրության այդ օրերում, մենք խոսում էինք վշտով, հուզմունքով, ինչպես խոսում են կորած բարեկամի մասին: Բայց մյուս կողմից, եթե մենք, թյուրքահայերս, այդքան թեթևաբար ենթարկվեցինք երիտթուրքերի հիպնոսին, դրա փոխարեն ռուսահայերը մնացին խուլ և օտար նրա հմայքին»¹⁸: Իբրև այդ փաստի ապացույց, խոսակից հայը բերել է «Հորիզոն» լրագրի կարծիքները: «Հորիզոնը»,—ասել է խոսակիցը,—չերմորեն բողոքեց այդպիսի անարժան հարձակման դեմ, որովհետև որքան էլ վրդովեցուցիչ և անարդար լինեի հայկական տեսակետից վերահիշյալ դատը (դաշնակցականների), այնուամենայնիվ «Հորիզոնը» գտնու էր, որ «ռուսաց կառավարությունը կռվում և հալածում է ոչ թե ամբողջ հայոց ազգը, այլ միայն նրա սոցիալ-քաղաքական կուսակցություններից միսր», և որ հայերի վիճակը Ռուսաստանում անհամեմատ բարձր է թյուրքաց հայերի վիճակից»:

«Անհետացող Հայաստան» խորագրի տակ Օլգենինի տպագրած հաջորդ հոդվածը կրում է «Թուրքահայերը և Ռուսաստանը» վերնագիրը: Նշելով, որ իր բոլոր թղթակցություններում կարմիր թելի պես անցնում է արևմտահայերի «հզոր և զուտ տարերային ձգողական ուժը դեպի Ռուսաստանը»¹⁹, հրապարակախոսը հայտնում է, որ դա հաստատել են նաև Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերիկը, Ֆրանսիական հյուպատոս Զարչեսկին և գերմանական ու ամերիկյան միսիոներները: Պատմական մի էքսկուրս կատարելով դեպի անցյալը, Օլգենինը նշում է, որ նախորդ դարի վերջերից դաշնակցականներն աշխատեցին ժողովրդի մեջ «տարակուսանք» արթնացնել դեպի Ռուսաստանը: Պոլսում սահմանադրության հռչակումը և հայերի հետ երիտթուրքերի «մեղմ» քաղաքականությունը դաշնակցականներին գցեցին նրանց գիրկը, որոնց հետ էլ կազմեցին քաղաքական սերտ բլոկ, որի սուր ծայրն ուղղված էր Ռուսաստանի դեմ: Սակայն վերջինիս նկատմամբ դաշնակցականների թշնամանքը զուտ քաղաքական երանգ ուներ: Նրանք բոլորն էլ դուրս են եկել Ռուսաստանից, կրթվել են ռուսական դպրոցներում, ռուսական գրականությամբ և Ռուսաստանի հետ չեն խզել կապերը: Բացի այդ, օսմանյան ազատության հույսերի ու անկկալությունների կարճատև լուսավորությունը հաջորդեց խաբված պատրանքների դառը հոդմը: Թուրքերի հետ հայ ժողովրդի բախտը կապելու դաշնակցականների այս քաղաքականությունը հայ ժողովրդական զանգվածներին մեջ ավելի ևս ամրապնդեց այն համոզումը, թե «արտաքո Ռուսաստանի» չիք

¹⁸ «Մշակ», 13 մարտի 1913:

¹⁹ Նույն տեղում, 18 ապրիլի 1913:

կյանից, երբ Բիթլիս եկա, ես զգացի, որ ընկել եմ մի երկիր, ուր թագավորում է մինչև այժմ իր ամբողջ խավար ուժով Աբդուլ Համիդի զգվելի և անամոթ ռեժիմը: Հյուսիսային մասերում, ուր ես իջևանեցի... անմիջապես ենթարկվեց «օբսերվացիայի» թե՛ ոստիկանության և թե՛ ծայրային լրտեսների կողմից: Եվ ամբողջ 5 օր ոչ մի հայ չհամարձակվեց այցելել ինձ»²⁵: Այնուհետև թղթակիցը հանգամանորեն ներկայացնում է Բիթլիս քաղաքի և վիլայեթի լեռնոտ ու հեռու գյուղերում բնակվող հայերի կացութունը, նրանց ծանր ու անապահով կյանքը, բուրդ բեկերի ու աղանների վերջ չունեցող կամայականությունները: Հարկ է ասել, որ, լինելով Բիթլիսում, Օլգինինը մի թղթակցություն էլ գրել է քաղաքում հայ և քուրդ բնակչության ընդհարման մասին²⁶:

Բիթլիսից Օլգինինը ուղևորվում է Մուշ, ապա՝ Էրզրումի նահանգ²⁷: Էրզրումից գրում են, որ վանից Բիթլիս մեկնելու կամ էլ Բիթլիսից դուրս գալու ճանապարհին քրդերը հարձակվել ու սպանել են Օլգինինին²⁸: Սակայն շատ շուտով մամուլը հաղորդում է, որ այդ լուրը ճիշտ չէ²⁹:

Էրզրումի վիլայեթի Կարաբիլիս քաղաքից Օլգինինն իր թերթին է ուղարկում «Անհետացող Հայաստան» ընդհանուր խորագրով՝ «Դամոկլյան սրի տակ» վերնագրով հոդվածը: Այդտեղ նա «Ֆոտոգրաֆիական ճշտությամբ» հաղորդում է «մեր կովկասյան սահմանագծի երկարությամբ ընկած երկրում» կատարվող իրադարձությունները: «Այն փաստերը, որ ես առաջ կբերեմ, մեր ժամանակներում կարծես թե կարող էին պատմվել միայն բովանդակային ուժանցների մեջ: Բայց, ավաղ, ամոթ մարդկության, նրանք իրական փաստեր են ժամանակակից Թյուրքիայում»³⁰: Նկարագրելով Կարաբիլիսեն, որը առևտրական քաղաք է՝ 200 տուն բնակիչներով, Օլգինինը բազմաթիվ փաստերով ներկայացնում է քաղաքի գլխավորապես քուրդ ազգաբնակչության վերաբերմունքը հայերի նկատմամբ, վերջիններիս հանդեպ նրանց գործադրած բռնությունները: Այդ շրջանում սովորական էին մահմեդականների զաղտնի խորհրդակցությունները, որտեղ նրանք քննարկում էին միավորվելու ու քրիստոնյաներին համատարած կոտորելու հարցերը: Ահա թե ինչ է գրում այս մասին Ս. Օլգինինը. «Այդպես են փաստերը: Նրանք լիակատար չէին լինի, եթե, ես չլրացնեի նրանց նորագույն դեպքերով, որոնք ոչ միայն ես ստուգեցի, այլ նրանք նույնիսկ իմ աչքի առաջ տեղի ունեցան: Սա խոսում եմ նոր պոպոմային ագիտացիայի մասին, որ կատարվում է քյուրդերի մեջ՝ այս փետրվարից սկսած, երբ հայտնի եղան վերջին դեպքերը Բալկաններում: Փետրվարի 5-ին կամ 6-ին տեղի ունեցավ զաղտնի խորհրդակցություն ամենաականավոր քյուրդ շեյխերի նախագահությամբ և, ինչպես ասում են, նախաձեռնությամբ հայտնի Հյուսիսի փաշայի:

Այդ խորհրդակցությունը գումարվեց Ալի-բեկի տանը, որ Աղեմանլի աշիրեթի հզոր ցեղապետն է: Թե ինչ խոսվեց և վճռվեց այդ ժողովում, ճիշտ հայտնի չէ: Բայց այդ մասին կարելի է ենթադրել՝ լսելով քյուրդ ամբոխի զրույցները: Իսկ այդ ամբոխը սաստիկ գրգռված է: Բազարներում, սրճարաններում ու մզկիթներում խոսում են համառ և կրքոտ. «Միևնույն է, մեր երկիրը, վաղ թե անագան, դառնալու է ուսական. ուրեմն երբ ուսաներ զան այստեղ, թող գտնեն զուտ մուսուլմաններ...»: «Որտեղից և ինչպե՞ս օգնություն կհասնի այն ժողովրդին, որին սպառնում է մի այնպիսի կոտորած, որից կզոհվա ամբողջ աշխարհը»³¹,—ցավով հարց է տալիս ուսա թղթակիցը:

Ս. Օլգինինի ուղևորությունը հայկական նահանգներ, նրա հանդիպումները, զրույցները քրիստոնյաների ու մահմեդականների հետ, ստացած տպավոր-

²⁵ «Մշակ», 7 մայիսի 1913:

²⁶ Նույն տեղում, 19 ապրիլի 1913:

²⁷ Նույն տեղում, 10, 31 մարտի 1913:

²⁸ «Հորիզոն», 18, 19 ապրիլի 1913:

²⁹ Նույն տեղում, 21 ապրիլի 1913:

³⁰ «Մշակ», 14 մարտի 1913:

³¹ Նույն տեղում:

րությունների մասին անկողմնակալ հոգւածները սկսում են լրջորեն անհանգրստացնել թուրքական իշխանութիւններին, որի վկայութիւններից մեկը էրորումում հրատարակվող թուրքական «Ալ բայրաք» թերթում տպագրված հոգւածն է ուս հրապարակախոսի գործունեութիւն մասին: Իրենք քաղվածքներ այդ հոգւածից. «Այսօրերս թերթի թղթակիցի հանգամանքով ուս մը եկավ այստեղ: Իր շարժումներուն կը հետապնդեմ: Ստույգ աղբյուրն մը հաստատեցի, որ հիշյալը թղթակիցի դիմակին տակ այս կողմերը կարգ մը ձեռնարկներ ընելու նպատակով եկած ուս սպա մըն է: Կատարած քննութիւններուս նայելով անոր նպատակն է հայերուն դիրքը ճշտել և հետո քուրտ պետերը Ռուսիո կողմը սիրաշահիլ: Պիթիւսի նահանգեն հետք Տիարպեքիւրի և Մուսուլի կուսակալութիւնները ևս պիտի այցելել: Շարաթն մը ի վեր հոս կգտնվի: Վաղը Սղերդ պիտի երթա. էշրաֆներն ոմանք պաշտոնապես տեսակցեցան անոր հետ:... Իրեն հետ տեսակցող շէյխներն ոմանք մասնավոր կերպով ինձի հավաստեցին, թե այդ թղթակիցը քուրտ պետերը կդրդե եղեր կարգ մը առանձնաշնորհումներու փոխարեն ուսական հպատակութեան ենթարկվի: Իր այս նպատակին մեջ հաջողած չլլալով՝ անոնց ազգային հպարտութիւնը փայփայած և ալպանացիներուն պես ինքնավարութիւն պահանջելու դրդած է զանոնք»³²: Պարզվում է նաև, որ քուրդ պետերից մի քանիսը «պարզապես իրենց անձնական շահին համար խաբված են թղթակիցին խոսքերեն»: Բայց, այնուամենայնիւ, գրում է թերթը, «վստահ եղեք, որ տգետ կարծված քուրտերը շատ խելացի են... և պիտի հետևին միմիայն այն պետերուն, որոնց կրոնական ջերմեռանդութեան և ազնվութեան վստահ են»: Խմբագրութեան ծանոթագրութեան մեջ նշվում է, որ թղթակիցը դուրս է հանվել երկրի սահմանից: Թերթի առաջ քաշած այն միտքը, թե ուս թղթակիցը «կարգ մը ձեռնարկներ ընելու նպատակով եկած ուս սպա մըն է», նյութ է տալիս թուրքական մամուլի մյուս օրգաններին: Վերջիններս աջ ու ձախ սկսում են գրել ուս գործակալների մասին, որոնք, իբրև, շրջում են Արևմտյան Հայաստանում և քրդերին կոչ անում ինքնավարութիւն պահանջել:

Ահա այս մթնոլորտում էլ Տիգրանակերտում թուրքական իշխանութիւնները հարց են բարձրացնում այնտեղ Տ. Օլգենինի մնալու մասին³³: Այդ առթիւ նա ապրիլի 11-ին «Биржевые ведомости» թերթին է ուղարկում հետևյալ հեռագիրը. «Մեղադրելով Վանի և Բիթլիսի վալիներից հակաթուրքական պրոպագանդայի մեջ՝ ես հեռագրով ստացա Կ. Պոլսից՝ ներքին գործերի մի-նիստրի հրամանը, թե պարտավոր եմ անմիջապես թողնել Թուրքիան, բռնելով այնպիսի ճանապարհ, որի վրա չլինեն ոչ հայեր, ոչ քուրդեր:

Թուրքաց արտաքին գործերի մինիստրը հարկավոր չէ համարել տեղեկացնել ուսաց դեսպանութեանը՝ իմ աքսորման մասին: Դիարբեքիւրում ուսական հյուպատոսարան չլինելով՝ ես ուղարկեցի մեր դեսպանութեան հասցեով իմ բողոքը թուրքաց կառավարութեան դեմ՝ տեղական ֆրանսիական հյուպատոսի միջոցով:

Բողոքում եմ ամենաեռանդուն կերպով թուրքաց իշխանութիւնների իմ վրա բարդած անուղիղ մեղադրանքների դեմ: ...Ձեր կողմից ևս բողոքեցեք այն բռնի միջոցների դեմ, որ ձեռք է առել թուրքաց կառավարութիւնը մի ուս ժուռնալիստի դեմ, որի հանցանքը միայն այն է, որ սա բարեխղճորեն արձանագրել է գործերի խսկական դրութիւնը»³⁴:

Արձագանքելով Տ. Օլգենինի կոչին, ուս առաջադեմ մամուլի օրգաններն իրենց բողոքի ձայնն են բարձրացնում հանուն ուս լրագրողի իրավունքների պաշտպանութեան: Այսպես, «Новое время» թերթը գրում է, որ Օլգենինը արտաքսվել է ոչ թե «հակաթուրքական ագիտացիայի», այլ քուրդ-թուրքական լծի տակ հեծող հայերի թշվառ վիճակը անաշուկութեամբ լուսարանելու հա-

³² «Ժամանակ», 1—14 մայիսի 1913: «Հորիզոն», 17 մայիսի 1913:

³³ «Ժամանակ», 8—21 մայիսի 1913: Թերթը հաղորդում է, որ Օլգենինը «այս պահուս» Խարբեքում է:

³⁴ «Մշակ», 30 ապրիլի 1913:

մարտի «Մենք կարծում ենք,—գրում է թերթը,—որ թուրք կառավարությունը ընտրել է ամենաանհամոզեցուցիչ միջոցը՝ հերքելու համար այն զաղանու-թյունների լուրերը, որոնք գործադրվում են հայերի նկատմամբ... Հալածելով թղթակցին, Կ. Պոլսի իշխանությունները իրանց դեմ են հանում ամեն մի ան-կողմնապահ դիտողի, որովհետև նա, ով վախենում է մերկացումից, ստորա-գրում է իր հանցավոր լինելը»³⁵։ Իսկ ահա թե ինչ է գրում «Речь» թերթը. «Օլգենինը իր թղթակցությունների մեջ ճշգրիտ կերպով նկարագրում էր թուր-քահայերի անմխիթար կյանքի պայմանները, որոնց մասին քիչ անգամ չէ մատնանշվել թե՛ ռուս և թե՛ արտասահմանյան մամուլի էջերում։ Օլգենինի թղթակցությունները, ինչպես երևում է, անհարմար էին թուրք կառավարու-թյան համար, այդ պատճառով էլ կարճամիտ պետությունների նման ինքն ևս նրա հեղինակին ենթարկեց վարչական բռնադատության։ ...Իր պարտականու-թյունները բարեխիղճ կերպով կատարող ժուռնալիստի «բերանը փակելու» հղանակը, ամենքին էլ բնականաբար կերևա ամենալավագույն ապացույցը, որ թուրք կառավարությունը անզոր է ըստ էության հերքել Օլգենինի հաղոր-դած տխուր տեղեկությունները»³⁶։ Ռուսական թերթերի հետ բողոքի իր ձայնն է բարձրացնում նաև «Մշակը», ավելացնելով, որ Տ. Օլգենինը «ծառայություն էր մատուցանում Թուրքիային՝ ցույց տալով նրա գոյությանը սպառնացող վտանգը»³⁷։

Կ. Պոլսի ռուսաց դեսպանատան և Ռուսաստանի արտաքին գործերի մի-նիստրության պահանջով Բ. Դուռը վերաճանաչում է Օլգենինի իրավունքները։ Սակայն նկատի ունենալով վերջինիս սպառնացող վտանգը, «ВНЕШНЕЕ ВЕДОМОСТИ» թերթի խմբագրությունը որոշում է հետ կանչել նրան³⁸։ Ապրիլի 15-ին Օլգենինը Դիարբեքից մի նամակ է հղում իր լրագրին, որը տպագրու-վում է թերթի մայիսի 31-ի համարում։ Այստեղ նա նկարագրում է քրդական վարագույնությունները, նշում, թե ինչպիսի խորամանկ քաղաքականություն է վարում թուրքական կառավարությունը՝ աշխատելով իր ցանկացած հունի մեջ դնել վերելք ապրող քրդական ազգային-ազատագրական շարժումը։ «Կառա-վարությունը ինքը շատ լավ գիտե, որ անօգուտ է քրդերի դեմ ուղարկել զա-նազան մեծ ու փոքր պատժիչ զորախմբեր և աշխատում է գործել ուրիշ կերպ՝ այն է՝ կամ կաշառքով կամ հակախնամական ագիտացիայով։ Այս վերջին նպատակով,—գրում է ռուս լրագրողը,—հենց նորերս Միջին Քուրդստանում... շրջում էին երկու երիտասարդ թուրք պատգամավոր, Դիարբեքի Ֆեզի բելը և Բիթլիսի Սուդուլա էֆենդին»³⁹։ Օլգենինը նկատում է, որ վերջիններիս ուղերթը համընկնում էր իր ճանապարհին և դրա շնորհիվ հնարավորություն է ունեցել փաստական շատ տեղեկություններ հավաքել ու համոզվել, որ «թրքական պառլամենտի հիշյալ պատգամավորների գործունեությունը քրդերի մեջ պարզապես հանցավոր բնույթ էր կրում»։ Այս շրջանում է, որ երիտթուր-քերը քրիստոնյաների նկատմամբ իրենց քաղաքականության հիմքում դրել էին թուրքերի և քրդերի միջև սերտ միություն հաստատել ու ազգամիջյան թշնա-մանքի և կրոնական մոլեռանդության հողի վրա գրգռել քրդերին քրիստոնյա-ների դեմ, մեղադրելով վերջիններիս (հատկապես Ռուսաստանին) Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտության համար։ «Նա է (Ռուսաստանը—Ա. Զ.), որ կաշառել է Աբդուլ Ռիզակին, շեյխ Սեյիդ շահին և մյուսներին, որ-պեսզի սրանք ապստամբություն սկսեն. նա ամեն տեղ ուղարկում է իր գոր-ծակալներն ու ծպտյալ սպաները, որոնք շրջադաշում են Քուրդստանում և աշ-խատում են քուրդերին ապստամբեցնել Թուրքիայի դեմ»⁴⁰,—ահա նման քա-րոզներով են այդ պատգամավորները մտնում քրդերի մեջ, գրում է Օլգենինը։

³⁵ Նույն տեղում, 24 ապրիլի 1913,

³⁶ «Հորիզոն», 27 ապրիլի 1913,

³⁷ «Մշակ», 20 ապրիլի 1913,

³⁸ Նույն տեղում, 24 ապրիլի 1913։ «Ժամանակ», 8—21 մայիսի 1913,

³⁹ «Հորիզոն», 7 հունիսի 1913,

⁴⁰ Նույն տեղում։

Այս դիմումների, կոչերի, ագիտացիայի արդյունքն այն է, շարունակում է հրապարակախոսը, որ քրդերը ելան քրիստոնյաների դեմ և սկսվեց մի անպատմելի ոճրագործությունների շարան: Դա խոստովանում են հենց իրենք՝ քրդերը՝ ասելով, Քբանի որ եվրոպացի քրիստոնյաները Խուրթիան կործանման դուռը հասցրին, ապա իրենք, իբրև լավ և ուղղադավան մուսուլմաններ, պարտք ունին վրեժ լուծելու քրիստոնյաներից այդ բանի համար: Եվրոպան հեռու է մեզանից, ուստի մենք վրեժ ենք լուծում նրանցից, որոնք մոտիկ են մեզ»⁴¹:

Ապրիլի 24-ին Օլգենինը գտնվում էր Խարբերդում⁴², իսկ ապրիլի 27-ին ժամանում է Վան⁴³: Այստեղ նա հանդիպումներ է ունենում քաղաքի հասարակայնության տարբեր խավերի հետ, մասնավորապես լինում է Երամյան վարժարանում: Նրա պատվին կազմակերպվում է ճաշկերույթ, որի ժամանակ ռուս հրապարակախոսը պատմում է հայաբնակ նահանգներում իր ստացած տպավորությունների մասին⁴⁴:

Մայիսի 4-ին Տ. Օլգենինը ժամանում է Երզնկա, որտեղ թուրքական կառավարությունը նրա վրա ուժեղ հսկողություն է սահմանում⁴⁵: Մայիսի 10-ին նա արդեն էր գրում⁴⁶, Ինչպես ամենուրեք, հայ հասարակայնությունն այստեղ ևս ջերմ ու սրտագին ընդունելություն է ցույց տալիս Տ. Օլգենինին: «Միայն «Դաշնակցություն» կոչված կուսակցության 3—4 շեֆեր արտահայտվեցին բուռն հակակրական ոգով,—հաղորդում է «Մշակը».—Ինչ խոսք, որ այդ վարմունքը երբեք կապ չունի և նույնիսկ հակառակ է Վանի, Բիթլիսի, Մուշի և այլ վայրերում գտնվող դաշնակցականների տրամադրության հետ: Հակառակ է նույնպես հայ ազգաբնակչության տածած հույսերին ու բաղձանքին: ...Մայրենի ծայր հակառակ է հենց էր գրում⁴⁷ գտնվող դաշնակցական խմբերի մտածողության: Այդ բանը Օլգենինն արդեն հնարավորություն ունեցավ ստուգելու: Ինչ էր իրականում կատարվել. դաշնակցություն կուսակցության տեղական մի քանի ղեկավարներ հանդիմանել էին Օլգենինին՝ թուրքական կառավարության դեմ նրա զործածած բուռն լեզվի համար՝ ու այն մի քանի սկանդալների մասին», որ նա ունեցել էր թուրքական իշխանությունների հետ: «Միթե նորից պիտի կրկնվի Իթթիհատ-Դաշնակցություն բուլկի ողբերգական զավեշտը»⁴⁷,—մտահոգվում է «Մշակը»:

Մայիսի 12-ին էր գրում⁴⁸ մի խումբ երիտասարդներ նամակ են հղում «Մշակի» խմբագրությանը, որտեղ, ներկայացնելով Տ. Օլգենինի շնորհակալ գործը Արևմտյան Հայաստանում թուրքահայ իրականությունն ուսումնասիրելու առումով, գրում են. «Անոր հոգնատանջ աշխատանքը հսկայական ծառայություն մրն է թուրքահայ դատին ու համայն հայ ժողովրդին, ինչպես նաև թուրքահայ դատով հետաքրքրվող օտար մամուլի ու քաղաքական շրջանակների համար: ...Մեր սերն ու համակրությունը կնվիրենք պ. Օլգենինին, որ հանձն առավ հայ ցավի ու ազատամարտի ականատեսը ըլլալ հայոց աշխարհի մեջ և կրել նույն տանջանքը, որ բաժինն է եղած թուրքահայերուն դարերի ի վեր»⁴⁸: Այնուհետև նամակագիրները իրենց ցանկությունն են հայտնում, որպեսզի «Биржевые ведомости» թերթի խմբագրությունը Օլգենինին հնարավորություն տար Կովկասի և Ռուսաստանի կենտրոններում դասախոսություններ կարդալու կատարած ուղևորության մասին և միջոցներ տրվել նրան իր ուսումնասիրության արդյունքները հրատարակելու համար:

⁴¹ Նույն տեղում:

⁴² «Մշակ», 26 ապրիլի 1913:

⁴³ Նույն տեղում, 30 ապրիլի 1913:

⁴⁴ «Հորիզոն», 2 մայիսի 1913:

⁴⁵ Նույն տեղում, 9 մայիսի 1913, «Մշակ», 9 մայիսի 1913:

⁴⁶ «Մշակ», 16 մայիսի 1913: «Հորիզոն», 19 մայիսի 1913:

⁴⁷ «Մշակ», 16 մայիսի 1913:

⁴⁸ Նույն տեղում, 18 մայիսի 1913:

Մայիսի 13-ին Օլգենինը դուրս է եկել էրզրումից և մեկնել Կովկաս⁴⁹։ Անցնելով Կարաուրգանով Ալեքսանդրապոլ, ուր լինում է մայիսի 17-ին⁵⁰, նա մայիսի 20-ին հասնում է Թիֆլիս⁵¹։ «Հորիզոն» տպագրում է «Օլգենինի մոտ» թղթակցութիւնը, որտեղ, ներկայացնելով Օլգենինի կատարած տքնաշան աշխատանքը, գրում է. «Օլգենինը ներկայացնում է հետազոտողի մի բացառիկ տիպար։ Լինելով «Новое время»-ի նախկին թղթակից և օֆիցեր, նա, ինչպես ինքն է պատմում, դժվարութեամբ է համաձայնել գնալ Տաճկահայաստան, ունենալով համարյա անտարբեր վերաբերմունք դեպի Հայկական հարցը։ «Հիմա, ասում է Օլգենինը, ես ուղղակի սարսափով եմ հիշում հայերի հուսահատական դրութիւնը, որի մեջ նրանք սրտառուչ համատույժ ու սիրով իրենց աչքերը հառել են դեպի Ռուսաստանը»։ Ավարտելով թղթակցութիւնը, թերթը նշում է. «Այս առաջին անգամն է, որ մի ռուս աչքի ընկնող հրապարակախոս գալիս է հասարակութեան առաջ փաստաբանելու թուրքահայերի դրութիւնը՝ սպառնալիքով հարցի խոր ուսումնասիրութեամբ և անձնավիրութեամբ»⁵²։ Իսկ, ահա, «Մշակ» թերթը հաղորդելով նրա գալուստը, գրում է. «Ճանապարհորդի ասելով՝ շատ և շատ անմխիթարական է երկրի վիճակը ներկայումս։ ...Ժողովրդի մի մասը սկսել է արագորեն գաղթել, նա փախչում է սպասվելիք արհամիրքից։ Օլգենինը Մալաթիայի շրջանում տեսել է արտագաղթ ոչ թե առանձին-առանձին ընտանիքներով, այլ մեծ խմբերով, և մի ամսվա ընթացքում այդ շրջանից դուրս են եկել 470 ընտանիք։ ...Ներկա ձմեռվա ամիսներում եկել են հարյուրավոր գաղթականներ (մահմեդականներ—Ա. Զ.)։ Թուրքահայաստան և շարունակում են գալ։

Երկիրը հայերից մաքրելու նպատակով՝ օսմանյան կառավարութիւնը մի քանի տարիներէջ ի վեր բացել է հողային բանկ, որին պատվեր է տրված գնել հայերի հողերը փոքր-ինչ ավելացրած գներով, որպեսզի հողերը ազատվեն մահմեդական գաղթականների համար։ Այդ քաղաքականութիւնը այժմ առաջ է տարվում ավելի մեծ եռանդով, քան անցյալում»⁵³։ Այնուհետև թերթը հաղորդում է, որ Տ. Օլգենինը հարուստ նյութ է հավաքել Արևմտյան Հայաստանի մասին, լուսանկարել է բազմաթիւ տեսարաններ, դժբեր, շինութիւններ, և որ մայիսի 27-ին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում կկայանա նրա դասախոսութիւնը այդ թեմայով։ Իսկ մինչ այդ, մայիսի 23-ին «Մշակի» խմբագրութեան և «Գրական-գեղարվեստական սալոնի» նախաձեռնութեամբ վերջինիս լեզվեցուն դահլիճում կազմակերպում է ճաշկերույթ ի պատիւ Տ. Օլգենինի⁵⁴։ Ճաշկերույթի կառավարիչ, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանը շնորհակալական զգացմունքով լի ճառով դիմել է ռուս հրապարակախոսին։ Սրան հաջորդել է վերջինիս պատասխանը, որտեղ Օլգենինը մասնավորապես նշում է, թե ինքը «աշխատել է բանալ ռուս հասարակութեան առաջ մերկ ճշմարտութիւնը» թուրքահայերի մասին։ Ապա խոսել է Ալ. Քալանթարը, նշել Օլգենինի կատարած ուսումնասիրութեան նշանակութիւնը Հայկական հարցի համար։ «Օլգենինը անցել է բոլոր հայկական վեց վիլայեթները, կտրելով ավելի քան 2300 վերստ ճանապարհ,— մասնավորապես ասել է նա—Հայկական հարցի նախկին կարևոր շրջաններում մենք տեսանք եվրոպացի թղթակիցներ, որոնք գնացին թուրքահայաստան, ուսումնասիրութիւններ կատարելու այս անգամ մենք նրանցից ոչ ոքի չտեսանք։ Այժմյան տագնապի ժամանակ միակ լուրջ թղթակից հանդիսանում է Օլգենինը, որը մուտք գործեց թուրքահայաստան իրան համար

⁴⁹ «Հորիզոն», 26 մայիսի 1913։

⁵⁰ «Մշակ», 18 մայիսի 1913։

⁵¹ «Հորիզոն», 21 մայիսի 1913։ «Մշակ», 22 մայիսի 1913։

⁵² «Հորիզոն», 23 մայիսի 1913։

⁵³ «Մշակ», 22 մայիսի 1913։

⁵⁴ Նույն տեղում, 25 մայիսի 1913։ «Кавказ», 26 мая 1913.

աննպաստ հանգամանքներում»⁵⁵։ Այնուհետև խոսել են Ա. Շիրվանզադեն, Հ. Սուրվյանը, Ա. Խատիսյանը, Ալ. Քալանթարը, Տ. Օլգենինը։ Վերջում ճաշկերույթի մասնակիցները որոշել են «Биржевые ведомости»-ի խմբագրությանը դիմել հետևյալ խնդրանքով, որը մայիսի 25-ին հեռագրով ուղարկվել է Պետերբուրգ. «Հայ հասարակայնության զանազան խավերի ներկայացուցիչներ, գրողներ, կուլտուրական հաստատությունների անդամներ, ուսուցիչներ, կանայք, արտահայտում են ձեզ երախտագիտություն Օլգենինի՝ Անատոլիս ուղարկվելուն համար. նա հավաքել է շատ թանկագին սեղեկություններ երկրի, ազգաբնակչության և նրա այժմյան քաղաքական դրության մասին։ Մենք, ժամոթանալով այդ հարուստ նյութերի հետ, թախանձագին խնդրում ենք ձեզ հետաձգել Օլգենինի մեկնումը Թիֆլիսից, որպեսզի նա կարողանա այստեղ մշակել հավաքած խիստ շահեկան նյութերը։ Կիազորված 150 անձանց կողմից՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյան, «Մշակ» և «Արօր» լրագիրների խմբագիրներ՝ Ալ. Քալանթար և Հ. Առաքելյան»⁵⁶։ Շուտով ստացվում է «Биржевые ведомости» թերթի խմբագրության պատասխանը, որով հայտնվում է, թե Օլգենինը կարող է մնալ Թիֆլիսում ևս երկու-երեք շաբաթ՝ Արևմտյան Հայաստանի մասին իր նյութերը մշակելու և տպագրության հանձնելու համար⁵⁷։

Մայիսի 25-ին Օլգենինը հրավիրվում է մասնակցելու Սայաթ-Նովային նվիրված երրորդ երեկույթին, որ կազմակերպել էր Հայ գրողների ընկերությունը Թիֆլիսի ժողովարանում⁵⁸։

Հարկ է ասել, որ մինչ Օլգենինի դասախոսությունը կովկասյան մամուլում բազմաթիվ հոդվածներ են տպագրվել, որտեղ, ըստ արժանվույն գնահատելով Օլգենինի գործունեությունը, հայությանը կոչ է արվում անպայման լսել նրա դասախոսությունները և ըստ հնարավորին օժանդակել նրա ձեռնարկումներին։ Դրանցից մեկը կրում է «Գնացեք լսելու» խորագիրը, որ գրել է Մ. Ն.՝ «Վաղը ռուս ժուռնալիստ Օլգենինը կարդալու է իր դասախոսությունը «Անհետացող Հայաստանի» մասին։ ...Օլգենինի դասախոսությունը դրված է արյան տառերով արյան մեջ խեղդվող մի ժողովրդի մասին։ Հազվագյուտ եզակի ազդարարություն պետք է լսվի կենդանի վկայի բերանից անհետացող Հայաստանի մասին...

Ըմբռնում ես, արդյոք, ընթերցող, այդ խոսքերի բովանդակ սարսափը։ ...Նվ պետք է շնորհակալ լինել Օլգենինին, որ իր բանախոսությունը երկու այնպիսի բառերով է որակել, որ ից է պահ մի սարսուռ, ցնցում առաջ բերեն յուրաքանչյուր հայի մեջ... «Անհետացող Հայաստանը»։ ...Գնա, հայ մարդ, և լսի՛ր մինչև վերջ կենդանի վկայի կենդանի պատմությունը քո եղբայրների մասին, որոնք կանգնած են խոր անդունդի մեջ...»⁵⁹։

⁵⁵ «Մշակ», 25 մայիսի 1913։

⁵⁶ Նույն տեղում, 29 մայիսի 1913։

⁵⁷ Նույն տեղում, 30 մայիսի 1913։ «Հորիզոն», 30 մայիսի 1913։

⁵⁸ «Մշակ», 25 մայիսի 1913։ «Հորիզոն», 25 մայիսի 1913։

⁵⁹ «Մշակ», 26 մայիսի 1913։ Ի դեպ, նկատենք, որ ապրիլի 17-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնի դահլիճում Պետական դոմայի անդամ Պ. Միլյուկովը հանդես էր եկել «Թուրքական կրիդիսը և Բալկանյան դաշնակցությունը» թեմայով դասախոսությամբ («Кавказ», 12 апреля 1913, 19 апреля 1913, «Հորիզոն», 19 ապրիլի 1913)։ Ռուսական պետական կյանքին մոտ կանգնած դասախոսի անունը հավաքել էր մեծ բազմություն, որոնք եկել էին լսելու նրա կարծիքը վերածնվող փոքր ազգերի մասին նաև հայերի ծանր կացության, նրանց ազատագրական ձգտումների, մեծ տերությունների ղեկավարների խոստումների ու հայտարարությունների մասին։ Սակայն հանդիսականների սպասելիքները չեն արգարացել։ Համակրորեն խոսելով բալկանյան երկրների՝ Մակեդոնիայի, Ալբանիայի, նույնիսկ Սրբիայի ազատագրման մասին, դասախոսը ոչ մի խոսք չի ասել Հայկական հարցի վերաբերյալ («Հորիզոն», 19 ապրիլի 1913)։ Բայց ապրիլի 19-ին արդեն Զուբալովի անվան ժողովրդական տանք-կարգացած իր երկրորդ զեկուցման մեջ հանգամանորեն անդրադարձել է Հայկական հարցին և

Մայիսի 26-ին «Մշակում» տպագրվում է Օլգենինի դասախոսության ծրագիրը, իսկ 27-ին Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները շրջած հայտների ռուս հրապարակախոսը Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնոս հանդես է դալիս «Անհետացող Հայաստանը» թեմայով դասախոսությամբ⁶⁰։ Մայրեծայր լեվիեցուն դահլիճը Օլգենինին ընդունում է բուռն ոգևորությամբ։ Նա սկսում է իր դասախոսությունը, հալտարաբերով, որ «չորս ամիս կատարած ճանապարհորդությամբ անկարելի է բովանդակ թուրքահայաստանի ներսև վիճակի լիակատար պատկերը պարզել։ Սակայն ես կհաղորդեմ իմ թարմ տպավորությունները ձեզ համառոտակի կերպով և մնալով սոսկ օբյեկտիվ շրջանակում։

Մանոթեններից և բարեկամներից շատերը ինձ հարց տվին՝ թե ինչու՞ եմ ես ընտրել «Անհետացող Հայաստան» խոսքերը: Ես պատասխանում եմ, որ այդ ես արևի եմ խորին համոզմունքից դրդված, և կաշխատեմ այժմ ապացուցել այդ բառերի ճշտությունը, եթե շասեմ «անհետացած Հայաստանը...»⁶¹: Ապա դասախոսը խոսում է Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայի քաղաքականության և նրա ռազմական ուժի մասին, հայտնում այն կարծիքը, որ պարտությունից հետո «Թուրքիան ձեռք բերեց դրական, շոշափելի արդյունք. այն՝ որ զարթեց մահմեդական ազգային զգացմունքը, իհարկե, շուրջիստ ոգով: Թուրքաց ազգայական զգացմունքի ալիքը հասնում է անգամ մինչև Կովկաս...»⁶²: Հետևում է եզրակացությունը, որ ըստ այդմ էլ Հայկական հարցը այսուհետև դառնում է Ռուսաստանի համար շատ կարևոր մի հարց, այն դարձել է ռուսական հարց: Օլգենինը նշում է, որ Հայկական հարցում Ռուսաստանը պետք է նկատի ունենա մի կարևոր գործոն՝ քրդական հարցի առկայությունը: Ապա դասախոսը հանգամանորեն իր տեսակետն է ներկայացնում քրդերի վերաբերյալ, նկարագրում նրանց անցյալը, օսմանցիների տիրապետությունը, քրդերի կիսանկախ դրությունը, իրար հանդուրժող ապստամբությունները Թուրքիայի դեմ, կանգ է առնում քրդերի մեջ նկատվող նոր շարժման վրա: Միաժամանակ Օլգենինը նշում է, որ թուրքական կառավարող շրջաններն անում են ամեն ինչ՝ քրդական շարժմանը հակահայկական, հակաքրիստոնեական ուղղվածություն տալու համար: Մեր նպատակից դուրս է այստեղ հանգամանորեն շոշափել Օլգենինի հայեցակետերը, ասենք միայն, որ նա քրդական շարժման ընդհանուր նպատակը համարում է Թուրքական բռնակալ լծի տապալումը, անկախ Քուրդստանի ստեղծումը, ինչպես և Ռուսաստանի նկատմամբ քրդերի ակնկալությունները: Այնուհետև հրապարակախոսը նկարագրում է Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբեքի, Մըվազի և Էրզրումի նահանգներում հայերի վիճակը և այն համարում ճգնաժամային: «Ես պետք է ի չիք դարձնեմ... կովկասահայի լավատեսությունը: Նախկին Հայաստանը գոյություն չունի այլևս. մնացել է սոսկ նրա խղճուկ տեսքը: Նախկին հարուստ քաղաքներից այժմ մնացել են սոսկ մնացորդներ, բեկորներ: Այնտեղ՝ ձեր երազած Հայաստանում օր ու գիշեր կանգուն են անցյալի փլատակները... Հայաստանը այժմ նմանվում է գերեզմանատան... Միայն Վանի վիլայեթում հայերը կազմում են ընդհանուր ազգաբնակչության 58%, իսկ Մուշի վիլայեթում՝ հազիվ 70%: Մնացած հայաբնակ վայրերում հայ ազգաբնակչության թիվը 30%-ից չէ անցնում»: Դասախոսը կանգ է առնում

Հույս հայտնել, որ Շալվահյան հաշվեհարդարից հետո, Հայկական հարցն էլ դրական լուծում՝ կստանա (Վճռիդոն, 21 ապրիլի 1913): Հետաքրքիր է, որ Բաքվում կայանալիք Միլլուկովի այս դասախոսությունը ադրեշյանցիները ցանկացել են վիժեցնել, բայց դա նրանց չի հաջողվել (Վճռիդոն, 24 ապրիլի 1913):

60 «Մշակ», 22 մայիսի 1913; «Հորիզոն», 29, 31 մայիսի 1913; «Кавказ», 29 мая 1913.
«Ժամանակ», 7—20 հունիսի 1913;

61 ԵՄԴԿԵՆ, 29 ՄԱՐԽՍԻ 1913.

62 Նույն տեղում:

Արևմտյան Հայաստանում գործող դաշնակցություն, հնչական և սահմանադիր-նամկավարական հայկական կուսակցությունների վրա, նշում, որ բարենորոգումներ ստանալու խնդրում թեև դրանց միջև կա համաձայնություն, բայց ներքին միաբանություն, ընդհանուր գործողության ծրագիր չկա: «Եվ եթե դա կրիտիկական թույլեն, հայերը պատրաստ չպետք է լինեն»,—սա է Օլգենինի հաստատ համոզմունքը, և նա այդ հանգամանքի վրա է հրավիրում կովկասահայերի ուշադրությունը:

Տ. Օլգենինը անցնում է թուրքահայերի տնտեսական դրությանը, խոսում կառավարության ագրարային քաղաքականության, հողատեր բեկերի և հայ կապալառուների հարաբերությունների մասին, նշում հայերից գանձվող ուղղակի և անուղղակի հարկերը, ներկայացնում, այսպես կոչված, ագրարային բանկերի գործունեությունը: Ահա շարիքի զխավոր կետը, որի վրա ամեն մի ցավակից հայ պետք է իր բարոյական պարտականությունը համարե մտածել լրջորեն, որպեսզի թուրքահայի հողերը չխլվեն,—եզրակացնում է Օլգենինը:—Ո՛ր է զնալու անճար թուրքահայը: Նա անկարող է բեկից հողը կապալով վեցնել, կորցրել է սեփականը, չկա արդյունաբերություն, շուկա և նրան մնում է մի հուսահատ միջոց միայն՝ ձեռք առնել գաղթականի անիծյալ ցուպը...»⁸³ Սա նշանակում է, որ արևմտահայերի տնտեսական և հողային հարցերին ավելանում է և գաղթականությունը: Նա այն միտքն է հայտնում, որ եթե այդ վիճակը շարունակվի, ապա 10—15 տարուց Արևմտյան Հայաստանում ճանապարհորդողը կտեսնի ոչ թե անհետացող, այլ արդեն անհետացած Հայաստան: Ռուսաբնակ և ամերիկաբնակ, առհասարակ ամենուրեք ապրող հայերը պետք է լրջորեն հոգան, մտածեն այդ շարիքի մասին լայն շրջանակներ: Կոնկրետ պետք է կազմակերպել օր առաջ, ժամ առաջ, ըստ առաջ: Այլապես ուշ կլինի»⁸⁴,—ասում է Օլգենինը: Նա նշում է նաև դրա առաջն առնելու ուղիները: Ամենից առաջ, ի հակադրումն թուրքական ագրարային բանկի՝ հայկական ագրարային բանկի հիմնում, որը ոչ միայն գումարների պետք է տրամադրի թուրքահայերին, այլև պետք է հիմք դնի կոոպերատիվ միությունների, որոնք իրենց գործունեությամբ զգալի չափով կբարելավեն արևմտահայերի վիճակը: Այդ գործի նախաձեռնողները պետք է լինեն կովկասահայերը:

Այնուհետև Օլգենինը խոսում է կրոնի մասին, քաջատեղյակություն ցուցաբերում հայ ժողովրդի գոյության պահպանման գործում եկեղեցու կատարած պատմական որոշիչ դերի հարցում, դատապարտում կրոնափոխությունը, որ զգալի չափերի է հասել: Խոսելով միսիոներների գործունեության մասին, ուստի լրագրողը նկատում է. «Դավանափոխ հայերը, կարելի է ասել, դադարում են այլևս հայ լինելուց: Շատ տեղերում էլ հայերը իրենց լեզուն չգիտեն, որոնք նույնպես կորած են հայության համար: Այդպիսի հայերի մեջ գործում են միսիոներները. նրանց դպրոցական գործունեությունն անշուշտ որոշ չափի օգտակարություն ունի, բայց ագրարային տեսակետից նրանք մի վնասակար տարր են հայերի համար»⁸⁵: Այնուհետև դասախոսը անդրադառնում է քրիստոնեական եկեղեցու նկատմամբ թուրքերի վերաբերմունքին, թուրքական պաշտոնյաների հակաքրիստոնեական, բացահայտ պրովոկացիոն պրոպագանդային:

Տ. Օլգենինը այն միտքն է զարգացնում, որ թուրքահայերին նախ և առաջ պետք է ձեռք մեկնեն հենց իրենք՝ հայերը: Նա չի հավատում բարենորոգումներին, նրա կարծիքով մեծ տերությունները շահագրգռված են «միմիային» թուրքիայի անձեռնմխելիությամբ»⁸⁶: Դեռևս պահպանել թուրքիայի ամբողջ

⁸³ Նույն տեղում:

⁸⁴ Նույն տեղում, 30 մայիսի 1913:

⁸⁵ «Էնթերգոն», 31 մայիսի 1913:

⁸⁶ Նույն տեղում:

ջությունը, նշանակում է կռվել Ռուսաստանի դեմ. այդ հարցում կռվել Ռուսաստանի դեմ, նշանակում է թշնամի լինել և հայոց հարցին»⁶⁷։

Օլգենինը ցուցադրում է մի շարք հայկական գյուղերի, վանքերի, տեսարժան վայրերի լուսանկարներ՝ բացատրություններով ու մեկնություններով։ Կեսժամյա ընդմիջումից հետո շարունակելով դասախոսությունը, նա կրկին անդրադառնում է բարենորոգումների հարցին, արտահայտում իր բացասական վերաբերմունքը դրա նկատմամբ, հիմնավորում իր տեսակետը, այն է՝ Հայաստանը զուտ տնտեսական շուկա դիտելու Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքականությունը։ Օլգենինը հանգամանորեն նշում է Հայաստանում Ռուսաստանի շահերը և նկատում, որ ռուս հասարակայնության համար պետք է պարզ լինի, որ Հայկական հարցը և ռուսական է»⁶⁸։ Այնուհետև նա մի շարք հուզիչ պատմություններ է անում Ռուսաստանի հանդեպ արևմտահայերի ջերմ վերաբերմունքի ու մեծ հավատի մասին, նշում, որ թուրքահայությունը իր աչքերը ուղղել է դեպի քրիստոնյա Ռուսաստանը, և որ վերջինս պետք է իր հուժկու ձայնը հնչեցնի ի պաշտպանություն հայերի։ «Եթե այդ շարվի,—ասում է Օլգենինը,—մենք հանցավոր կլինենք մի նահատակվող քրիստոնյա ժողովրդի և ռուսական պետականության առաջ...»։

Ս. Օլգենինը միաժամանակ արտահայտում է նման պայմաններում հայ ժողովրդի գործնականորեն մասին իր տեսակետները։ Նա քաջ գիտակցում է, որ հայ ժողովրդի ուժը նախ և առաջ իր հավաքականության մեջ է և բոլոր կուսակցություններին կոչ է անում միաբանել, ապա՝ «ինքնակազմակերպվել» (ինքնապաշտպանվել) և երրորդ՝ հարկ է հայկական նահանգներում մասսայաբար դպրոցներ բացել։

Այնուհետև Օլգենինը անդրադառնում է հայ կնոջ իրավագուրկ կացությանը, իսկ վերջում նշում այն վերաբերմունքը, որ պետք է ունենա Ռուսաստանը Հայկական հարցի հանդեպ, այն է՝ առաջ քաշել և բարոյական աջակցություն ցույց տալ քրդական շարժմանը և դրանով իսկ լուծել Հայկական հարցը։ «Իրանք քրդերը չեն վտանգավոր հայերի համար, այլ թուրք կառավարությունն է դարձնում նրանց վտանգավոր»⁶⁹,—ահա Օլգենինի կարծիքը։ Օլգենինը իր դասախոսությունն ավարտում է շատ դիպուկ և հուզիչ հետևյալ խոսքերով. «Այսօր, երիտասարդ-թուրքերի դժոխային երկրում անհետացող թուրքահայը՝ հիվանդ հոգեպես, հիվանդ մարմնապես... իր վերջին հույսը, ակնկալությունը Ռուսաստանից է սպասում և ռուս գործչի գրածի նման ասում է՝

— Батько, где ты? Слышишь ли ты все это? Գալի՞ս ես...

Ու լսվում է Ռուսաստանի ձայնը՝

— Գալիս եմ...»⁷⁰։

Դասախոսությունը լայն արձագանք է գտնում կովկասահայության շրջանում։ Նշվում է, որ «դասախոսության ամենամեծ արժեքն այն էր, որ վերջապես մի ռուս հասարակական գործիչ հրապարակով Ռուսաստանի գործն է համարում հայերի փրկությունը, որ ցույց է տալիս մի անվերապահ համակրություն ու հավատ դեպի տանջված հայ ժողովուրդը և չի քաշվում... պախարակելու ռուս կառավարության անվճարական ու հոռետես քաղաքականությունն այդ խնդրում»⁷¹։ Մամուլի էջերում տպագրվում են հոդվածներ ու նամակներ, որոնցում կոչ է արվում անհապաղ միջոցներ ձեռնարկել Ս. Օլգենինի խոսքում հնչած հարցերի, նպատակների իրականացման համար։ Զանկություն է հայտնվում, որ այդ թիւստ ցանկալի, գեղեցիկ և նպատակա-

67 Նույն տեղում։

68 «Մշակ», 31 մայիսի 1913։

69 «Հորիզոն», 31 մայիսի 1913։

70 «Մշակ», 31 մայիսի 1913։

71 «Հորիզոն», 31 մայիսի 1913։

հարմար դասախոսությունը մեզանում կրկնվեր մի քանի անգամ և ուրիշ տեղեր, այն է՝ ժողովրդի ավելի մատչելի խավերի համար, նաև քաղաքիս բոլոր ժողովարաններում»⁷²:

Հունիսի 9-ին թիֆլիսում Հայոց բարեգործական ընկերության դաշլիճում նախատեսվել է Ա. Հարությունյանի դասախոսությունը՝ «Ի՞նչ է ասում Տ. Օլգենինը Հայկական հարցի մասին» վերնագրով⁷³:

Փարիզից Արշակ Զոպանյանը հեռագրում է. «Պարիզի Հայկական կոմիտեն արտահայտում է իր չեղձ հրախտագիտությունը պ. Օլգենինին նրա վեհանձն արշավանքի մասին ի նպաստ Հայկական հարցի»⁷⁴:

Մայիսի 29-ի երեկոյան Օլգենինը մեկնում է Բաքու⁷⁵: Հունիսի 2-ին նա տեղի Մարդասիրական ընկերության գրադարանում զրույց է վարում իր ճանապարհորդության մասին⁷⁶, իսկ ամսի 8-ին Մայիլյանների թատրոնում կրկնում է «Անհետացող Հայաստան» վերնագրով դասախոսությունը: Բաքվի թե՛ հայկական և թե՛ ռուսական մամուլը ընդարձակ հաղորդագրություններ է տպագրում Օլգենինի դասախոսության մասին: Դրանցից տեղեկանում ենք, որ այս անգամ ևս Օլգենինը հիմնականում շոշափել է այն գործոնները (քրդական ճնշումները, հողային հարցը և արևմտահայերի հասարակական դրությունը), որոնք ճակատագրական նշանակություն ունեն հայերի գոյության համար: Դասախոսության մեջ հետևողականորեն անցնում է այն գաղափարը, որ, Օլգենինի խոսքերով ասած, «եթե մի ժամանակ ռուս դիպլոմատիայի նշանաբանն էր «Հայաստանը առանց հայերի», այժմ այդ նշանաբանը պիտի լինի «Հայաստանը բնակեցրած միայն հայերով»⁷⁷: Օլգենինի վերջնական կարծիքն այն է, որ Հայաստանը Ռուսաստանի համար և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ ռազմական առումով շահագնաց կարևոր դեր ունի: Ըստ այդմ էլ, «Հայկական հարցը լուծելու նախաձեռնությունը պիտի իր վրա վերցընի Ռուսաստանը: Դա նրա թե՛ բարոյական պարտքն է և թե՛ պետական շահն է պահանջում: Ռուսաստանը պիտի ուղղի իր անցյալի սխալները. եթե այժմ էլ Հայկական դատը իր լուծումը չստանա, Ռուս պետությունն ապագայում շատ մեծ վտանգների առաջ պիտի կանգնի: Ռուսաստանը պիտի պահանջի ոչ միայն ռեֆորմների գործադրություն, այլև պիտի իրականացնի Հայաստանի ավտոնոմիան... Ամեն մի օրվա ուշացումը՝ այդ հարցի լուծման համար մահացու հարված է թե՛ Ռուսաստանի և թե՛ հայերի նկատմամբ»⁷⁸:

«Հորիզոնը» հունիսի 13-ին հաղորդում է, որ Տ. Օլգենինը Բաքվում կարդացել է երկու դասախոսություն՝ «Անհետացող Հայաստանը» և «Տագնապը Հայաստանում»:

Ռուս հրապարակախոսի դասախոսությունը Բաքվում արժանանում է նաև տեղի ադրբեջանական մամուլի ուշադրությանը: «Սադայը Հակկ» թերթը հանգամանորեն ներկայացնում է Օլգենինի ելույթը, նշելով, որ նա այդ հարցին միանգամայն անժանոթ ու անտեղյակ է, որ դասախոսի պատմածները հայտնի իրողություններ են⁷⁹:

Օլգենինի ճանապարհորդությունը Արևմտյան Հայաստան, տեղում նրա կատարած ուսումնասիրությունները այնպիսի մեծ արձագանք են գտնում, որ հունիսի 6-ին Պետական դումայի նիստում Հայկական հարցի քննության ժամանակ Բաքվի, Գանձակի և Երևանի նահանգների պատգամավոր Մ. Պապաջանյանը, խոսելով Թուրքիայում ապրող հայերի դրության մասին, ներկա-

⁷² «Մշակ», 1 հունիսի 1913:

⁷³ «Հորիզոն», 5 հունիսի 1913:

⁷⁴ «Մշակ», 4 հունիսի 1913, տե՛ս նաև «Ժամանակ», 12—25 հունիսի 1913:

⁷⁵ «Մշակ», 30 մայիսի 1913: «Հորիզոն», 31 մայիսի 1913:

⁷⁶ «Բաքվի ձայն», 8 հունիսի 1913:

⁷⁷ Նույն տեղում, 11 հունիսի 1913:

⁷⁸ Նույն տեղում, 15 հունիսի 1913:

⁷⁹ «Հորիզոն», 3 հուլիսի 1913:

յառնելով հայկական խնդրի պատմությունը, մատնանշելով հայերի ֆինանսական, իրավական և հողային վիճակը, բնակչության կյանքի ու կալքի անապահով դրությունը, մեծապես հենվում է ռուս հրապարակախոսի հաղորդումների վրա⁸⁰:

Նոր Նախիջևանի Հայկական բարեգործական ընկերությունը Օլգենինին ուղղած հեռագրում նշելով, որ վերջինս «զոհելով իր կյանքը, բացեց տաճկական Հայաստանի սարսափները, լուսավոր մարդկանց ուշադրությունը դարձնելով ինքնակալության զոհերի վրա», նրան հրավիրում է դասախոսություն կարդալու նաև Նոր Նախիջևանում⁸¹:

Իրոք, Տ. Օլգենինի շրջագայությունը Արևմտյան Հայաստանում, նրա կատարած ուսումնասիրությունները, Անդրկովկասի հայաշատ երկու խոշոր քաղաքներում կարդացած դասախոսությունները ժամանակին մեծ արձագանք են գտել: Ինչպես տեսանք, մամուլը բազմակողմանիորեն անդրադարձել է այդ ամենին և նշել, որ «օտարի բերանից լսած այդ տեղեկությունները և առաջ բերած թվերը մեծ համակրություն գտան մեր հասարակայնության մեջ: Ընկերությունները հայտնեցին, որ տպագրել կտան նրա գրածները և օգնում էին, որ դասախոսություններին շատ մարդ գնա»⁸²:

Ինչևէ. հունիսի 24-ին Թիֆլիսի առաջնորդարանում հայ մտավորականությունը ճաշկերույթ է տալիս ի պատիվ Վանի ռուսաց փոխհյուպատոս Ա. Օլֆերիևի և Տ. Օլգենինի: Ծաշկերույթի կառավարիչն էր «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարը: Արտասանվել են բազմաթիվ ճառեր, որոնց զխավոր նյութը Հայկական հարցն էր, հայերի դրությունը Արևմտյան Հայաստանում, մշակութային, առևտրական, տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի և Կովկասի միջև: Խոսել է նաև Օլգենինը, վկայելով, որ Վանի նահանգի հայությունը չարքաշ ու աշխատասեր, բարոյական բարձր արժեքներ ունեցող տարր է⁸³:

Հունիսի 25-ին Հայոց ազգագրական ընկերության խորհուրդը փոխհյուպատոս Ա. Օլֆերիևին և Տ. Օլգենինին պատվում է ընթերցում, որին մասնակցում են խորհրդի և ընկերության մի քանի անդամներ և հյուրեր, որոնց թվում է մեծն Կոմիտասը: Ի դեպ, չափազանց խորհրդանշական է այս միջոցառումը Կոմիտասի մասնակցությունը, քանի որ նա չորս տարի էր, ինչ բացակայում էր Կովկասից և Թիֆլիս էր եկել էշմիածնից՝ միջոցառման օրը: Մի շարք կենացներ են առաջարկվել, այդ թվում ռուս և հայ ժողովուրդների բարեկամության: Հանդիսականների խնդրանքով Կոմիտասը կատարում է «Հայաստան», «Կոռնկ» և ժողովրդական մի քանի երգեր: Երկրորդ անգամ խոսելով, Օլգենինը կոչ է անում օգնել Վանի Երամյան դպրոցին, որը 35-ամյա արդյունավետ գործունեությունից հետո ընկել էր պարտքերի տակ և կանգնած էր փակվելու վտանգի առաջ: Առաջարկությունը չերմ ընդունելություն է գտնում ներկաների մեջ և կատարվում են նվիրատվություններ⁸⁴:

Ինչպես հաղորդում է մամուլը, Անդրկովկասից Տ. Օլգենինը «իր խմբագրության կարգադրությամբ» մեկնելու էր Պարսկաստան, ապա՝ Մոնղոլիա⁸⁵:

Առաջին աշխարհամարտի նախաշեմին Հայաստանի և Հայկական հարցի մասին ռուսական մամուլում Տ. Օլգենինի տպագրած հոդվածները, Թիֆլիսում և Բաքվում նրա հրապարակային ելույթները մեծ արձագանք են գտնում ռուս հասարակայնության ամենալայն խավերի շրջանում, նոր հետաքրքրություն առաջացնում հայ ժողովրդի նկատմամբ: Դրա խոսուն վկայությունն է նաև

80 «Մշակ», 4, 6 հունիսի 1913:

81 «Հորիզոն», 11 հունիսի 1913:

82 Նույն տեղում, 5 հունիսի 1913:

83 «Մշակ», 27 հունիսի 1913. նաև՝ «Кавказ», 28 июня 1913.

84 «Մշակ», 27 հունիսի 1913:

85 «Հորիզոն», 31 մայիսի 1913: «Ժամանակ», 12—25 հունիսի 1913:

ալն աննախադեպ հասցանաւորը, որ Կովկասյան ճակատում ռազմական գործողութիւնների առաջին օրերից Անդրկովկաս և ռազմաճակատ են մեկնում «Русское слово», «День», «Русские ведомости», «Новое время» և մի շարք այլ թերթերի ռազմաթիվ ներկայացուցիչներ՝ Ֆ. Կրյուկովը, Վլադ. Պոլոնսկին, Ի. Յասինսկին, Ս. Պոլյակովը, Ալ. Վոդենսենսկին, ապա՝ Ա. Տիրկովան (Ա. Վերգեթսկի), Վ. Նեմիրովիչ—Դանսենկոն, Վ. Վոդովոդովը և այլք։ Ռուսական և անդրկովկասյան մամուլում, ինչպես և իրենց հրապարակային ելութներում նրանք անկողմնակալ մեկնարանում էին պատերազմական գործողութիւնները, վեր հանում հայ օղորդողը ողբերգութիւնը, պաշապանում հայոց դաւար։

РУССКИЙ ПУБЛИЦИСТ Т. ОЛЬГЕНИН
ОБ АРМЕНИИ И АРМЯНСКОМ ВОПРОСЕ

А. А. ЗАКАРЯН

Резюме

В конце 1912—начале 1913 г. в Тифлис прибыл корреспондент петербургской газеты «Биржевые ведомости», известный публицист Антуан Березовский-Ольгинский (псевдоним—Т. Ольгинин). Сначала в Тифлисе (3 января), затем в Эчмиадзине (23 января) он выступил с лекциями о Балканской войне, в которых коснулся также Армянского вопроса, отмечая, что он становится очередным политическим вопросом (после решенных балканских). Затем Ольгинин побывал в шести вилайетах Западной Армении (Эрзрум, Ван, Битлис, Тигранакерт, Себастья, Харберд), где обстоятельно изучил социально-экономическое и политическое положение западных армян. Свои впечатления он опубликовал в «Биржевых ведомостях» в ряде статей под общим заглавием «Исчезающая Армения». Вскоре турецкие власти, всерьез обеспокоенные развернутой Ольгининым деятельностью, обвинили его в антитурецкой пропаганде и подняли вопрос о его высылке из страны. Возвратившись из Западной Армении, Ольгинин в Тифлисе (27 мая), затем в Баку (8 июня) прочел лекции на тему «Исчезающая Армения». Он отмечал, что Армения играет чрезвычайно важную роль для России, посему «инициативу решения Армянского вопроса должна взять на себя Россия. Этого требуют как ее государственные интересы, так и моральный долг. Россия должна исправить ошибки своего прошлого: если и сегодня Армянский вопрос не будет решен, Российскому государству в будущем будет грозить большая опасность... Промедление в этом вопросе будет смертельным ударом как для России, так и для армян». Лекции нашли широкий отклик и были подробно освещены в печати. Поездка Т. Ольгинина в Западную Армению, его статьи и публичные выступления накануне первой мировой войны вновь пробудили интерес русской общественности к Армении и Армянскому вопросу.